

ԱՐԵՂՅԱՆ ՈՒ ՀԵՏԱԲԵՂՅԱՆ ԶԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՆՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Մերուժան Հարությունյան,
թարգման, ԵՊՀ-ի դասախոս

Ես էսօր խոսալու եմ Աբեղյանի ու հետաբեղյանական քերականությունների անհամատեղությունից (սրանց կասեմ՝ «աբեղյան ու հետաբեղյան քերականություններ») ու **զգուշացնում եմ**, ես էսօր խոսալու եմ Աբեղյանի քերականությա՞ն և ոչ թե իրա ուղղագրական ռեֆորմի մասին: Ուղղագրական ռեֆորմի մասին խոսում են անընդհատ, ու արդեն 100 տարուց ավել, բայց աբեղյան ու հետաբեղյան քերականությունների ահավոր հակասականության մասին չեն խոսացել արդեն 79 տարի: Էսօր հենց սրանից եմ խոսալու:

Անցյալ դարի 30-ական թվերին Սովետում հայտարարվեց, թե կիրենետիկան, գենետիկան ու հարաբերականության ընդհանուր տեսությունը կեղծ ու բուրժուական գիտություններ են, ու սրանք արգելվեցին Սովետի ողջ տարածքում, բայց հետո ռազմական կարիքներն ստիպեցին, որ Ես սաղ գիտությունների վարկը վերականգնվի: Բայց հենց Էդ թվերին Հայաստանում արգելվեց Մանուկ Աբեղյանի քերականությունը, ու Եսի արդեն արգելված էլ մնաց, մնաց արգելված մինչեվ Էսօր:

Հայաստանում, արդեն 20-ական թվերի վերջից, Աճառյանի ասպիրանտ Արարատ Ղարիբյանն ու Ղափանցյանի ասպիրանտ Գուրգեն Սեվակը, մի քանի ուրիշ ջահել ասպիրանտ ու ուսանողի հետ, հայտարարին, թե Մանուկ Աբեղյանի քերականությունն ու գրականագիտությունը «**մախիստական է, ֆորմալիստական, մետաֆիզիկական, իդեալիստական ու բուրժուական**՝ Է, որ Աբեղյանը իդեալիստ Բերկլիի (իրենց գրածով՝ «Բերկլինի») հետևորդն է»:

Ես ասպիրանտները, իրանց պրոֆեսորների **անծայտուն ու բացարձակ պասիվ դիրքով ոգեվորված**, մամուլում ու ուսանողական ժողովներում մի ահավոր ու այլանդակ ձեվով հարձակվան Աբեղյանի

վրա, իրանց եւ բազմաթիվ անվայել ու տգետ ելույթները հասցնելով մինչեւ Թիֆլիս ու Բաքու:

Աբեղյանը փորձեց եւ չակերտավոր «երիտքերականներին» մամուլով պատասխանի, բայց **ոչ մի թերթ չտպեց** Աբեղյանի առարկությունները, ու Աբեղյանին ոչ էլ բանավոր ելույթի հնարավորություն տվին:

Սրա համար էլ Աբեղյանը, լավ իմանալով ետ ստալինյան օրերի մղձավանջային «լոգիկան» ու տենալով, որ սրանց պրոֆեսորներն ու Համալսարանի ղեկավարությունը սրանց սաստելու փորձն է՛լ չի անում, 1931 թվին սուսուփուս թողեց ու համալսարանից գնաց:

Գնաց, որտեւ ինքը կյանքի մեծ փորձ ուներ, 56 տարի դասախոս ու ուսուցիչ էր եղել Գեվորգյան ճեմարանում ու հայկական դպրոցներում, ու լավ էր հասկանում, որ եւ «երիտքերականներն» իրան ըտտե էլ օր ու արեւ չեն տա: Գնաց ու էլ մինչեւ իրա մահը քերականության ու գրականության տեսություններով չգբաղվեց:

Ասպարեզը մնաց եւ չակերտավոր «երիտքերականներին»:

Սրանք, եւ չակերտավոր «երիտքերականները», հայտարարին, թե իրանք «մերժում են Աբեղյանի քերականությունն ու գրականագիտությունը ու պիտի ստեղծեն մի նոր, **դասակարգային ու պրոլետարական քերականություն ու գրականագիտություն**»:

Ստեղծին, ու մինչեւ Էսօր Աբեղյանի քերականությունը ՉԻ ԴԱՍԱԿԱՆԴՎՈՒՄ, չի դասավանդվում ո՛չ դպրոցներում, ոչ է՛լ համալսարաններում, ու աբեղյան քերականության վարկն մինչեւ Էսօր էլ չի վերականգնված: Սրա փոխարեն դասավանդվում են եւ հետաքեղյան դասակարգային ու պրոլետարական քերականությունները: Էլի՛ եմ ասում, եւ ԽՈՍՈՒՄ ԵՄ ԶԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ մասին, ոչ թե ուղղագրական ռեֆորմների մասին:

Համալսարանի ռեկտորն ու նույնիսկ Աղասի Խանջյանը մի քանի անգամ խնդրին, որ Աբեղյանը հետ դառնա Համալսարան, բայց Աբեղյանը պայման դրեց, թե առարկություններս տպեք, հետ դառնամ: Չտպին, բայց մի 5 տարի հետո թողին, որ Աբեղյանը բանավոր ելույթ ունենա, ու շարադրի իրա առարկությունները:

Աբեդյանը իրա էս ելույթն ունեցավ Հայաստանի Լուսժողկոմատում, 1936 թվին, ու էս հրապարակային ելույթով, իրեք օր շարունակ, քննադատելով ջարդուհիշուր արեց հետաբեդյան քերականությունների սա՛ղ առարկությունները, հենց Արարատ Ղարիբյանի ու Գուրգեն Սեվակի ու նաև էն օրերի մեր մնացած բոլոր առաջավոր մտավորականների ներկայությամբ (Աճառյանի, Ղափանցյանի և այլոց):

Իրեք օր հետո, երբ Մանուկ Աբեդյանը վերջացրեց իր առարկությունները, ոչ մեկը, (սրանց հետ էլ՝ Աճառյանը) ծպտուն անգամ չհանեց [2, էջ՝ 656-657]: Բայց հաղթին հետաբեդյաններների հետևորդները: Ու հաղթած էլ մնացել են մինչև էսօր:

Էս պատմությունը հայ գիտության պատմության **ամենաողբերգական ու ամենախայտառակ** պատմություններից մեկն ա, ու էսի երեվի ավելի քիչ խայտառակ չի, քան թե Կոմիտաս վարդապետին Էջմիածնից քշելու պատմությունը:

Հմի էս ուզում եմ շատ կարճ ձեզ ներկայացնեմ Աբեդյանի ու էսօրվա հետաբեդյան քերականությունների անվերացելի մի քանի հակասությունը:

1. Մ. Աբեդյանն ասում ա, թե **հայերենի անորոշ դերբայը մենակ ու մենակ գոյական ա ու բայական ոչ մի ֆունկցիա չունի, ոչ մի տեսակ բայ չի** [2, էջ՝ 537-538, 541], այնինչ՝ հետաբեդյան քերականություններն ասում են, թե անորոշ դերբայն անդեմ բայ ա ([5] , էջ՝ 44, 46, 59, 60):

2. Մ. Աբեդյանն ասում ա, թե **հայերենն անդեմ բայ կամ անդեմ նախադասություն չունի** [1, 2], հետաբեդյաններն ասում են, թե ունի ([5] , էջ՝ 44, 46, 59, 60):

3. Մ. Աբեդյանն ասում ա, **թե բայ չկա, ուրեմը նախադասություն է՛լ չկա** [1, 2], հետաբեդյաններն ասում են, թե կա ([5] , էջ՝ 59, 60): (Ու ըստ հետաբեդյանների, հնարավոր ա, որ հայերենի ամեն մի բառն էլ, բառակապակցությունն էլ ըլի նախադասություն ևն: Էս անգամ արդեն հեշ պարզ չի, թե Նախադասության գաղափարն էլ ո՞ւմ ա պետք):

4. Աբեդյանն ասում ա [1], **թե ստորոգելը նշանակում ա, որ բայն իրա ու/կամ բառ-ստորոգյալի իմաստը վերագրում ա իրա դեմքին կամ իրա բառ-ենթակային** [2, Էջ՝ 616], իսկ հետաբեդյաններն ասում են ([5] , Էջ՝ 549), **թե ստորոգելը «շարահյուսական կարգ Է, որով նախադասության բովանդակությունը վերագրվում, հատկացվում Է իրականությանը...»** (այսինքը, ոչ մի բան Էլ չեն ասում):

5. Աբեդյանը **հնչերանգային ստորոգման մասին ոչ մի բան չի ասում** (որտեվ Էսի անհեթեթ ա, ինչը շատ հեշտ ա Էրեվում, տես [4]-ը), իսկ հետաբեդյաններն ասում են ([5] , Էջ՝ 549)), **թե «հնչերանգը ստորոգում Է իրացնում»:**

6. Աբեդյանն ասում ա, **թե հայերենի նախադասության գլխավոր անդամը (խոսքի կենտրոնը) բա՛յն ա** [1, Էջ՝ 362, 361], հետաբեդյաններն ասում են, **թե նախադասության գլխավոր անդամները ենթական ու ստորոգյալն են** (տես [5]-ի ու [6]-ի համապատասխան բառահոդվածները:

7. Աբեդյանն ասում ա, **թե ենթական բայի դեմքն ա, կամ Էդ դեմքն ու իրան լրացնող բառը** (բառ-ենթական [2, Էջ՝ 601-618]), իսկ հետաբեդյաններն ասում են, **թե «ենթական նախադասության գլխավոր անդամներից մեկն Է,...որին ստորոգումով վերագրվում Է որեվէ հատկանիշ...»** ([5] , Էջ՝ 198):

8. Աբեդյանն ասում ա [1, 2], **թե ստորոգյալը բայի դեմքին կամ բառ-ենթակային վերագրվող բայիմաստն ա (կամ Էլ՝ բառ-ստորոգյալի իմաստը, հե՛նց բառ-ստորոգյալը)**, (Էջ՝ 582-607, 618-628)), իսկ հետաբեդյաններն ասում են ([5], Էջ՝ 546), **թե ստորոգյալը խոսքի գլխավոր երկու անդամից մեկն ա:** (Իմիջիայլոց, բայի իմաստը որեվէ պրոցեսի կամ վիճակի գաղափար ա, ու հենց Էսի յա վերագրվում (ստորոգվում) բայի դեմքին: Ուրեմը, հետաբեդյանների ասելով, բայի իմաստը նախադասության անդամ ա, բա՛՛):

Եսքանով իլը բավարարվենք, բայց ասեմ, որ աբեդյան ու հետաբեդյան քերականությունների հակասությունների թիվը շատ մեծ ա:

9. **Չետաբեդյանների սահմանումների մեծ մասը խախտում ա դասական տրամաբանության տարրական պահանջները:**

Չետաբեդյան քերականությունները կա՛մ անծպտուն շրջանցում են Էս հակասություններն ու Աբեդյանի քննադատությունը, կա՛մ ասում են

հետևյալը [1, էջ՝ VII]: **Եսքանից ակնհայտ էրեվում ա, որ աբեղյան ու հետաբեղյան քերականությունները բացարձակ անհամատեղելի են:**

Բայց մեր Էսորվա հետաբեղյան քերականները ոչ մի անգամ չեն ասում, թե Աբեղյանի քերականությունը սխալ է: Իրոք, բերեմ մեր Էսորվա հետաբեղյան քերականների մի պաշտոնական կարծիքն Աբեղյանի քերականության մասին:

Քաղվածքներս ԵՊՀ-ի Հայոց լեզվի ամբիոնի պաշտոնական կարծիքից են, որ տպված են Աբեղյանի ֆունդամենտալ քերականական երկի՝ «Հայոց լեզվի տեսության» 1964 թվի հրատարակության նախաբանում: Որ ասեմ, ամենաքիչը կգարմանաք: Հրե՛ս Էդ կարծիքը, կարդում եմ:

«<Աբեղյանի> Աշխարհաբարի շարահյուսությունը՝ և «Հայոց լեզվի տեսությունը՝... տալիս են հայոց լեզվի **ամբողջական ու ճշգրիտ (sic!)** պատկերը և կազմում են **ներդաշնակ ու սերտ միասնություն**»:

«...մեծատաղանդ գիտնականը **խորագույնս (sic!)** բացահայտել է հայոց լեզվի մեջ **իրապես գոյություն ունեցող** օրենքներն ու օրինաչափությունները»:

«Ակադեմիկոս Մ. Աբեղյանի աշխատության մեջ, բնականաբար, կան նաև վիճելի, ինչպես նաև հնացած որոշ կետեր, բայց **դրանք ամենևին (sic!) չեն նսեմացնում (sic!) նրա գիտական ու ճանաչողական (sic!) բարձր արժեքը**: <Աբեղյանի> «Հայոց լեզվի տեսությունը՝ **եղել է և մնում է (sic!) իբրև հայոց լեզվի ուսումնասիրության մի լավագույն (sic!) ձեռնարկ ու ուղեցույց**»:

Բայց **արդեն 79 տարի յա**, ինչ Աբեղյանի քերականական գրքերով երբևէ քերականություն **չեն դասավանդել ո՛չ մեր դպրոցներում, ոչ Է՛լ մեր որևէ բուհում**, չնայած էն հանգամանքին, որ հենց հետաբեղյանների՝ ասելով՝ Աբեղյանի «Հայոց լեզվի տեսությունը» Էղել ա ու մնում ա իբրև հայոց լեզվի ուսումնասիրության մի լավագույն ձեռնարկ՝ [սույն տեղը]: Բա՛՛:

Բացի սա, **մեր Էսորվա քերականները երբեք չեն ասում, թե Աբեղյանի ասածների ի՞նչն ա հնացել ու խի՞ յա հնացել, կամ խի՞**

յա վիճելի: Սրա նք են թե՛ հեղինակավոր բառարաններում, թե՛ առանձին մենագրություններում Աբեղյանի քերականության մասին գրած «հեղինակավոր՝ կարծիքները:

Ես սրանց ավելացնում եմ իմ եզրակացությունները.

1. Եսքանից հետևում ամ, որ **մեր Էսորվա արեվելահայերենն ունի երկու իրար հակասող ու բացարձակ անհամատեղ քերականություն:** Մեկը՝ Մանուկ Աբեղյանի քերականությունը, մյուսը՝ հետաբեղյան քերականությունները, իսկ Ես վերջինները, ըստ Էոլթյան, սաղն Էլ նույնն են: Ըստ Էոլթյան, սրանք իրանց ծնող ու հիմք Ղարիբյան-Սեվակյան քերականություններից տարբերվում են մենակ իրանց **սխալաշատությամբ, ու նույն հասկացությունները տարբեր տերմիններով նշանակելով, ու իրանց ահավոր բառային աղմուկով:**
2. Ես Էրկու քերականությունից ո՛ր մեկը որ համարես ճիշտ, մյուսն անպայման ամ սխալ:
3. Ուրեմն, **Էսորվա հայերեն լեզվի քերականությունը գիտություն չի, որտեղ իրա ասածների ճիշտ ու սխալը որոշելու ոչ մի գիտական (մարդուց անկախ, օբյեկտիվ) չափանիշ չունի:**
4. Սրա փայլուն ապացույցը հենց Է՛ն հանգամանքն ամ, որ մեր Էսորվա հայ լեզվաբանները, ըստ Էոլթյան, ասում են, թե Էսորվա **նույն արեվելահայերնի** Ես Էրկու իրար լրիվ հակասող քերականությունն Էլ, թե՛ Աբեղյանինը, թե՛ հետաբեղյանը (Ղարիբյան-Սևակյանը) ճիշտ են:
5. Տրամաբանական վերլուծությունը ցույց ամ տալի, որ հայերենի Էսորվա քերականության ամենագլխավոր սահմանումները (բայի, գոյականի, նախադասության ևն. Տես [5-6]-ը) **չեն բավարարում գիտական սահմանումներին ներկայացվող հիմնական պահանջներին:** Ես սահմանումները կամ շրջելի (reciprocativ) չեն, կամ սրանց ստորոգյալը սահմանած չի: Ուրեմն, **Ես սահմանումները գիտական չեն:**
6. Արդեն ութը տարի յա, ինչ մամուլով ու իմ գրքերով ու հոդվածներով ([4], տես համ Էլ ընդեղի հղումները) մեր լեզվաբաններին

ասում եմ ես բաները, ու առաջարկում եմ, որ ես հարցերը քննարկվեն, բայց իրանք նույնիսկ մի տող **հրապարակային** պատասխան էլ չեն տվե:

7. Լա՛վ, ինձ չեն պատասխանում, թո չպատասխանեն, բայց **մեր լեզվաբանները խի՞ չեն պատասխանում Մանուկ Աբեղյանի 1936 թվի Է՛ն հայտարարությանը, թե «... Արարատ Ղարիբյանի քերականության գրքի մի քանի էրեսը թերթեցի, և գտա, որ դա գրել է մի քերականորեն ՏԳԵՏ ՄԱՐԴ՝** [2, էջ՝ 495. Տես նաև էջ՝ 656-657-ը], ինչին հենց ինքը, Ա. Ղարիբյանը, ով ներկա էր էդ հայտարարությանը, մի բառով անգամ չի առարկե:

8. Բա պարզ չի՞, որ **տգիտությունը, ինչքան էլ ժամանակ անցնի ու ո՛նց էլ ծմռես, երբեք էլ գիտություն չի դառնա:** Աբեղյանի 1936 թվի առարկությունները 51 տարի խնամքով թաքցրին մեր ժողովրդից, ու սրանք լույս տեսան միայն 1985 թվին, իրա մահից՝ 41 տարի անց:

9. Ենթադրենք, մեր Էսօրվա լեզվաբանները մինչև 1985 թիվը չգիտեին, որ Աբեղյանն Էսօրվա հետաբեղյան քերականություններին ըսենց կտրուկ ու հզոր առարկություն (շաատ մեղմ ասած) ունի: Բա հմի՞: ՉԷ՞ որ Աբեղյանի «Մի քանի քերականական հարցերի մասին» (Մ. Աբեղյան, Երկեր, Ը հատոր) գործը հրատարակվելուց հետո արդեն 29 տարի յա անցե:

10. Հա՛, 29 տարի յա անցե, բայց մեր լեզվաբանները, զարմանալի միաբանությամբ, բառ անգամ չեն ասում Է՛ն գիտնականին, ով արդի հայերենի գիտական տեսության հիմնադիրն ա, ու ով իրենց քերականությունները համարում ա տգիտություն: Էս անգամն Է՛ լ ա լռությունը համաձայնություն:

Եզրափակեմ:

Մեր քերականությունը 1934 թվից սխալ ճամփով ա գնացե, ու Էսօր արդեն գիտություն չի, որտե՛վ իրա դրույթների ճիշտ ու սխալը ջոկելու ո՛չ մի գիտական, ո՛չ մի օբյեկտիվ չափանիշ չունի:

Հա՛, մենք սխալվել ենք, ու մեր սխալն Էսօր Է՛լ ենք շարունակում: Էսօրվա մեր լեզվին վերաբերող սա՛ղ պաշտոններն էլ գրավում են

մենակ ու մենակ հետաքեղյան քերականները: Թե որ հանգարծ Աբեղյանի քերականությունը նորից դառնա պաշտոնական, մեր Էսորվա սաղ քերականների մինչեվ Էսոր հրատարակած գիտական սա՛ղ աշխատություններն Էլ սխալ դուրս կգան, կջրվեն, ու իրանց գիտական ու մանկավարժական աստիճանների Էությունն Էլ կդառնա զրո, ու նույնիսկ բացասական: Էսի անխուսափելի յա:

Էս հասկանում եմ, որ Էսի Էդ մարդկանց համար ողբերգություն ա, բայց **ի՛նչ անենք, մեր սխալը համառությամբ շարունակե՛նք, ու մեր ազգի սաղ Էրեխեքին ու ջահելներին սխալ ու անհեթեթ քերականություն սովորացնենք**, որ մեր Էսորվա փսեվդո-սինքրոն լեզվաբանությամբ զբաղվողները չդժբախտանա՛ն:

Բա պարզ չի՞, որ երբ ստիպում ենք, որ մեր Էրեխեքն ու ջահելներն անգիր անեն Էսորվա հետաքեղյան սխուլաստիկական քերականությունները, սպանում ենք իրանց մտածողությունը, Էլ չասած, որ մեր Էսորվա գրական ոճերի համարյա սա՛ղ անհեթեթություններն Էլ բխում են Էս սխուլաստիկայից:

Բա ըտենց Էլ գլխի չընգնե՛նք, որ արդեն 21-րդ դարն ա, բայց մենք իլը գիտական քերականություն չունենք:

Մեր ազգի մեծագույն երախտավորներից մեկը՝ Ղազարոս Աղայանը, հենց մեր գրական ոճերի առիթով, ասել ա. «Սխալվելն ամիթ չի, պարոնայք, բայց սխալը մեծ համառությամբ պաշպանելը շատ-շատ ամիթ ա»:

ԵԼՈՒՅԹԻՍ ՎԵՐՋԸ

Հավելված-ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԸ

Մի Էրկու բան ասեմ Մանուկ Աբեղյանից, որտեվ Էս իրոք որ պատվելի գիտնականի ու մարդու մասին մեր ժողովուրդը քիչ գիտի, որտեվ Աբեղյանի թշնամիներն ու սրանց հետևորդներն արդեն մոտ 100 տարի յա, ինչ հայիոյում են Աբեղյանին:

Մանուկ Խաչատուրի Աբեղյանը (1865-1944) ծնվել ա Նախիջևանի Աստապատ գյուղում, սովորել ա Էջմիածնի Գևորգյան ճեմարանում

(1876-1885), ավարտելուց հետո մոտ իրեք տարի դասավանդել ա ճեմարանում, ուսումը շարունակել ա Ենայի, Լայպցիգի, Բեռլինի ու Փարիզի համալսարաններում (1893-1898), հետո Էլ դասավանդել ա՝ Շուշու թեմական դպրոցում (1887-1889), Թիֆլիսի Յովնանյան դպրոցում (1889-1893), Ներսիսյան դպրոցում ու Յայկական պետական գիմնազիայում (1914-1919):

Հետո Աբեղյանը Էղել ա Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) հիմնադիր դասախոսներից, որտեղ Էղել ա պատմագրական ֆակուլտետի դեկանը (1923-1925), գլխավորել ա Յայաստանի գիտահետազոտական առաջին հիմնարկը՝ Գիտության և արվեստի ինստիտուտը, (հետագայում սրա հիման վրա կազմակերպվեց Յայաստանի պետական ակադեմիան), հետո աշխատել Է ԵՊՀ-ում ու զանազան գիտական հիմնարկներում:

Պրոֆեսոր ա 1926-ից, գիտության վաստակավոր գործիչ՝ 1935-ից, Յայաստանի ակադեմիայի հիմնադիր անդամ՝ 1943-ից, ինչից հետո ապրեց մոտ մեկ տարի: 1929-ից բժիշկներն Աբեղյանին կարդալն ու գրելն արգելել են, բայց Աբեղյանը, կարողության չափով, աշխատել ա մինչև կյանքի վերջը:

Աբեղյանը 1926-ից մի քանի անգամ խնդրել ա, որ իրան Էրկու ասպիրանտ տան, որ սրանցից հայոց լեզվի տեսության մասնագետ պատրաստի, բայց անընդհատ խոստացել են ու ըտենց Էլ չեն տվել:

Ու ըտենց Էլ **հայերն Աբեղյանից հետո հայոց լեզվի տեսության իսկական մասնագետ չունեցան**, չնայած, արդեն մի քանի Յայոց լեզվի տեսություն ա լույս տեսե, բայց Էս մենագրությունները, սաղն Է՛լ, դարիբյանական քերականությունների ‘սկզբունքներով’ են գրված:

Աբեղյանը հայտնաբերել Է Սասնա ծռերի երկրորդ տարբերակը, Եվրոպա գնալուց առաջ, 1886-ին, գրի ա առե ու 1889-ին հրատարակել ա Դավիթ և Միեր ժողովրդական վեպի Մոկաց պատումը: Գիտական մեծ վարպետությամբ ու խորությամբ հետազոտել ա Սասնա ծռերը (Էսի ամփոփելով մի գեղեցիկ գրքում), նորովի յա ուսումնասիրել հայերի հին ու նոր հավատալիքները ու սրա գերմաներեն տարբերակի համար («Յայ ժողովրդական հավատալիքը» վերնագրով) Ենայի համալսարանում ստացել Է փիլիսոփայության դոկտորի աստիճան:

Գիտական քննությամբ ապացուցել ա հայ ժողովրդական այլ վեպերի (Վիպասանք, Պարսից պատերազմը, Տարոնի պատերազմը) գոյությունը: Հայ էպիկական ստեղծագործությունը բաժանել է հինգ շրջանի:

Ուսումնասիրել ա հայ հին ու նոր ժողովրդական բանաստեղծությունը, մանավանդ միջնադարյան հայրեններն ու (մեծ մասամբ) Կոմիտասի հավաքած երգ-տաղիկները (որ նաև Կոմիտասի խնդրանքով ու գործակցությամբ խմբագրել ա):

Ցույց ա տվել, որ հայրենները քուչակինը չեն, այլ հին ու անհայտ հեղինակներին են, ու որ դրանցից շատերն ունեն է՛ն տեսակ շերտեր, որոնք գալիս են հնագույն հեթանոսական օրերից, ինչը լրիվ համաձայն ա Կոմիտասի ուսումնասիրություններին: Էս արդյունքները տպվեցին «Հայոց հին գրականության պատմություն» երկհատոր աշխատության մեջ, ըստ Էության, հետմահու (1944, 1946):

Աբեղյանը նաև հայկական վերածննդի տեսության հիմնադիրն ա:

Աբեղյանի «Հայոց լեզվի տաղաչափությունը» (1933) հայ իրականության մեջ անգերազանց ա մինչև Էսօր:

Աբեղյանը, Հայր Միաբան Գալուստ Տեր-Մկրտչյանի հետ, հայ քննական-բաղդատական տեքստաբանության հիմնադիրն ա:

Հրատարակել ա քննական-բաղդատական բնագրեր (Խորենացու Հայոց պատմությունը, Ս. Հարությունյանի աշխատակցությամբ:

Աբեղյանն ա կազմե նաև Կորյունի «Վարք Մաշտոցի» գործի քննական տեքստը (Հայր Միաբանից անկախ) ու Էսի թարգմանել ա աշխարհաբար):

Աբեղյանն ա Կ. Մելիք-Օհանջանյանի հետ կազմե ու հրատարակության պատաստե Սասնա ծռերի տարբերակները (1936, 1944-1951):

Աբեղյանը Էն օրերի համաշխարհային նորագույն քերականության հետևորդն էր Հայաստանում (ինչի ամենակարկառուն ներկայացուցիչներն են Ֆերդինանդ դե Սոսյուրն ու Աճառյանի

ուսուցիչներ՝ Հայնրիխ Հյուբշմանն ու Անտուան Մեյեն), ու աշխարհաբար հայերենի առաջին գիտական քերականության հիմնադիրն ա:

Առաջինն Աբեղյանն էր, ով **հրաժարվեց հայերենի քերականությունը լատիներենի քերականության կանոններով ձևելուց**, ինչը, մեր հունաբանների ու լատինաբանների պարտությունից հետո, դարձել էր մի ուրիշ վնասակար ‘ավանդույթ’:

Աբեղյանի ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ հիմնական գործերն են.

«Հայոց լեզվի ուղղագրությունը», ինչի մեջը գրաբարի ուղղագրության Է՛ն կանոններն էին, որ մի քանի տարի առաջ Իշխանյանն իրան էր վերագրում (1892),

«Գրաբարի համառոտ քերականություն» (1907), «Աշխարհաբարի հոլովները», (1908),

«Հայցական հոլովը մեր աշխարհաբարում» (1909-ին, ու հենց սրա մեջ էր Աբեղյանը ջախջախել Ս. Մալխասյանցի ‘տեսությունը’),

«Աշխարհաբարի քերականությունը» (1906),

«Աշխարհաբարի շարահյուսությունը» (1912),

«Հայոց լեզվի տեսությունը» (1931), «Մի քանի քերականական խնդիրների մասին» (1936):

Աբեղյանի կարևորագույն գործերից ա «Ժողովրդական լեզվի շեշտադրությունը», ինչը, իմ կարծիքով, ըստենց էլ եզակի ու առանց շարունակության մնաց հայագիտության մեջ:

Աբեղյանը 1941 թվին հրատարակում է ‘Վիշապներ’ կոչված կոթողներն իբրև Աստղիկ-Դերկետո դիցուհու արձաններ» գեղեցիկ մենագրությունը, որտեղ ցույց է տալիս, որ էս կոթողները հետազոտող ռուս գիտնականներ՝ Մառի, Սմիռնովի ու Բ. Պիոտրովսկու մեկնաբանությունը միանգամայն սխալ է:

Աբեղյանի էս քննությունն ու քննադատությունն Էնքան հզոր էր, որ սրանցից ոչ մեկը ծպտուն անգամ չի հանում:

Ծպտուն չհանեցին, բայց էս անգամ էլ Բ. Պիոտրովսկի՛ն դարձավ Աբեղյանին ու հայերին հակակրող: (Սովետի օրերին Բ. Պիոտրովսկին հեռացույցով մի ժամ խոսեց Ուրարտուի մասին, ու վերջում էլ

ավելացրեց, թե 'Ուրարտուն Կովկասում Է': Կարծում եմ, որ սա ասածս հակակրանքի բավարար վկայություն է):

Աբեղյանի բառարանագիտական գործերն են. «Ռուս-հայերեն ռազմական բառարանը» (1925),

«Ռուս-հայերեն իրավաբանական բառարանը» (այլոց հետ, 1919)

«Լատին-ռուս-հայերեն բժշկական բառարանը» (այլոց հետ, հրատարակվել է հետմահու, 1951-ին):

Էս տարի լրանալու յա Աբեղյանի ծննդյան 150-ամյակը, ու էս համոզված եմ, որ հայ երեվի ամենամեծ գիտնականի ու իր կյանքն անմնացորդ հայագիտությանը նվիրած էս փառավոր գիտնականի էս կյո՛ր հոբելյանը շատ անշուք են նշելու, ոնց որ նախորդ մի քանի անշուք հոբելյանը: